## Շարունակի՛ր այսպես.



*Արջը ձմռանը քուն է մտնում:*
*Արջերը ձմռանը քուն են մտնում:*

Դելֆինը փրկում է խեղդվող մարդուն:

Դելֆինները փրկում են խեղդվող մարդկանց:

Ոչ մեծ նավը երբեմն ավելի լավ է դիմանում փոթորիկին, քան խոշոր նավը:

Ոչ մեծ նավերը երբեմն ավելի լավ են դիմանում փոթորիկներին, քան խոշոր նավերը:

Կետը կաթնասուն կենդանի է:

Կետերը կաթնասուն կենդանիներ են:

Առյուծը կուշտ լինելիս կենդանիների վրա չի հարձակվում:

Առյուծները կուշտ լինելիս կենդանիների վրա չեն հարձակվում:

Գրի՛ր, թե ինչ փոփոխություններ կատարվեցին:
Այսպես՝ արջը-արջերը, է-են

Դելֆինը-դելֆինները, է-են, նավը-նավերը, է-են, փոթորիկին-փոթորիկներին,

կետը-կետերը, է-են, առյուծը-առյուծները, չի-չեն:

## Մեկ բառով կամ բառակապակցությամբ բացատրի՛ր.



| | |
|---|---|
| մոն գալ | զբոսնել, քայլել |
| հոգին ուտել | բարկացնել |
| խելքից պակաս | հիմար |
| խելքը գլուխը հավաքել | լրջանալ |
| գլխի ընկնել | հասկանալ |
| խոսքը մեր մեջ մնա | գաղտնիք պահել |
| սիրտը փորն ընկնել | վախենալ |
| գլուխ կոտրել | մտածել |

Պատմությունը կարդա՛.



Երկար ժամանակ հանելուկ էր մնացել այն բանը, թե ինչու են փոքրիկ ձկները մտնում գրենլանդական շնաձկների բերանները: Վերջերս պարզեցին, որ այդ շնաձկների աչքերը լույս են տալիս: Դրանով էլ նրանք խեղճ ձկնիկներին հրապուրում են:

Պատմի՛ր այն մասին, թե ինչու է փոքրիկ ձուկը մտնում շնաձկան բերանը:

Երկար ժամանակ հանելուկ էր մնացել այն բանը, թե ինչո՞ւ է փոքրիկ ձուկը մտնում գրենլանդական շնաձկան բերանը:.............................
Վերջերս պարզեցին, որ այդ շնաձկան..աչքերը լույս են տալիս: Դրանով էլ նա.............խեղճ ձկնիկին..հրապուրում է......... :

Ստացված պատմությունը կարդա՛: Ի՞նչ փոփոխություններ կատարվեցին, գրի՛ր. օրինակ՝ է-են, ձուկը-ձկները:

շնաձկների-շնաձկան, բերանները-բերանը, ձկնիկներին-ձկնիկին, նրանք-նա:



Բառը գտի՛ր և վանդակները լրացրո՛ւ.



1. առարկա, որով կողպեք, փականք են բաց անում
2. աքլոր-արաղաղ, լուսամուտ-պատուհան, արջունք-
3. գեղեցիկ-սիրուն, ապիտակ-ճերմակ, կոտոշ-
4. առավոտ-լուսաբաց, մեծ-խոշոր, բախտավոր-
5. թուփ՝ գեղեցիկ ու անուշաբույր ծաղիկներով, յասաման
6. միշտ կանաչ, փշատերև ծառ, որը նաև տոնածառ է դառնում

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | բ | ա | ն | ա | լ | ի |
| ա | ր | տ | ա | ս | ու | ք |
| | ե | ղ | ջ | յ | ու | ր |
| ե | ր | ջ | ա | ն | ի | կ |
| յ | ա | ս | ա | մ | ա | ն |
| | | ե | ղ | և | ն | ի |

Գրածդ բառերը ստուգի՛ր բառարանով:

Կարդա՛ բարձրաձայն: Ո՞րն է տարբերությունը:



Փոքրի՛կ, եղբայրդ տա՞ն է: Փոքրիկ եղբայրդ տա՞ն է:



Եթե նախադասության մասերը ճիշտ միացնես,
մի հետաքրքիր պատմություն կկարդաս:

Մեզ մի պատմություն է հասել մի կղզու մասին,
Այդ կղզում է գտնվել ռազմատենչ թագավորների մեծ ու ահեղ տերությունը,
Այդ թագավորի անունը Ատլանտ է եղել,
Բայց կղզուն դժբախտություն է պատահել,
Հողն սկսել է ցնցվել, լեռները ծուխ ու կրակ են ժայթքել, երկրաշարժ է եղել,
Չքացել են բնակիչները՝ ատլանտները, չքացել են հզոր թագավորները, չքացել է հրաշք կղզին՝ Ատլանտիդան,

որովհետև աստվածները բարկացել են ատլանտների վրա:
իսկ այս պատմությունը Ատլանտիդայի մասին մնացել է:
և այդ թագավորներից ամենաավագը տիրել է ամբողջ կղզուն:
և Ատլանտի օրոք չքնաղ կղզին ծաղկել է ու ծաղկել:
որը եղել է մեծ, հարուստ և գեղեցիկ:
և այդ երկրաշարժից մի օր ու գիշերում Ատլանտիդան սուզվել է ծովի տակ:

Մեզ մի պատմություն է հասել մի կղզու մասին, որը եղել է մեծ, հարուստ և գեղեցիկ:
Այդ կղզում է գտնվել ռազմատենչ թագավորների մեծ ու ահեղ տերությունը, և այդ թագավորներից ամենաավագը
տիրել է ամբողջ կղզուն: Այդ թագավորի անունտ Ատլանտ է եղել, և Ատլանտի օրոք չքնաղ կղզին ծաղկել է
ու ծաղկել: Բայց կղզուն դժբախտություն պատահել, որովհետև աստվածները բարկացել են ատլանտների վրա:
Հողն սկսել ցնցվել, լեռները ծուխ ու կրակ են ժայթքել, երկրաշարժ է եղել , և այդ երկրաշարժից մի օր ու
գիշերում Ատլանտիդան սուզվել ծովի տակ: Չքացել են բնակիչները՝ ատլանտները, չքացել են հզոր թագավորները,
չքացել է հրաշք կղին՝ Ատլանտիդան, իսկ այս պատմությունը Ատլանտիդայի մասին մնացել է:

Բառերն ընտրի՛ր և նախադասությունները լրացրո՛ւ.



*ծլվլում, երգում*

Պատուհանի գոգին նստած կինը
մեղմ ձայնով ...երգում............ էր:
Փոքրիկ աղջիկը ...երգում.......... էր մոր գրկում:
Ինչո՞ւ այդ ընտրությունն արեցիր: